ԱՐՓԵՆԻԿ ՂԱԶԱՐՈՍՅԱՆ
Պատմական գիտ. թեկնածու, ՄՄ, ՍՎԴ

ՀԱՅՐԱՎԱՆՔԻ ԳՐՉՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԸ

Հայրավանքը, որը հայտնի է նաեւ Հայր Հովհաննու վանք, Այրիվանք, Աղավնու վանք եւ Մարդաղավնյաց Սուրբ Նշան անուններով, Գեղարքունիքի նշանավոր վանքերից է։ Կառուցվել է Հայրավանք գյուղից հյուսիս-արեւելք՝ Սեւանա լճի հարավային ափի մի հրվանդանի վրա։ Հայրավան եւ Աղկալա (Բերդկունք) գյուղերը հիմնվել են ավելի հին, ընդարձակ մի բնակավայրի տեղում, որը, Սիմեոն կաթողիկոսից սկսած, ուսումնասիրություններում անվանվում է «Ազատ քաղաք»[1]։ Թեեւ վանական համալիրը երեք կողմից Սեւանա լճի ջրերով է շրջապատված, այդուամենայնիվ, համալիրի շինություններն ավելի անառիկ դարձնելու նպատակով չորս կողմից կառուցվել են ամուր պարիսպներ։ Համալիրի պաշտպանական այս կառույցները ոչ միայն ապահովում էին մենաստանի խաղաղ գործունեությունը, այլեւ պայմաններ ստեղծում հոգեւոր-մշակութային լիավայուն, անխափան գործունեության համար։

Գրավոր աղբյուրներում վանական համալիրի կառուցման, միաբանության հաստատման, ինչպես նաեւ տեղի միաբանների հոգեւոր-մշակութային գործունեության վաղ շրջանի մասին ոչ մի տեղեկություն չկա։ Հայր Հովհաննու վանքն աղբյուրներում առաջին անգամ հիշատակվում է 1530 թ. մի ձեռագրի հիշատակարանում[2]։ 1648 թ. ձեռագրի հիշատակարանում նշված է, որ վանքը մտնում է Մազազա գավառի մեջ[3]։ Ավելի ուշ՝ 1711 թ., Հայրավանքը հիշվում է Սիմեոն Երեւանցու «Ջամբռ»-ում՝ Աղց,

---

[1] Սիմեոն Ա. Երեւանցի, *Ջամբռ, Վաղարշապատ, 1873, էջ 284.* Յովհ. Շահխաթունեան, *Ստորոգութիւն կաթուղիկէ էջմիածնի եւ հինգ գաւառացն Արարատայ, հտ. Բ., էջմիածին, 1842, էջ 242.* Մեսրոպ արք. Սմբատեանց, *Տեղագիր Գեղարքունի ծովազարդ գաւառի, որ այժմ Նոր Բայազիտ, Վաղարշապատ, 1895, էջ 433, 438.* Հ. Ղեւոնդ Ալիշան, *Սիսական, Վենետիկ, 1893, էջ 410։*

[2] *Տես* Հ. Ղեւոնդ Ալիշան, *նշ. աշխ., էջ 141։*

[3] *Տես ՄՄ Հմր 4064, էջ 421ա. հմմտ. «ԺԷ. դարի հիշատակարաններ», մասն Գ., կազմեց՝ Վ. Հակոբյան, Երեւան, 1964, էջ 279։*

Հայոց թառ, Կեչառիս, Բջնի, Գետարգելաց Սուրբ Նշան միաբանությունների շարքում[4]։

Երբեմնի մեծ վանական համալիրից այժմ կանգուն են մնացել եկեղեցին եւ գավիթը։ Եկեղեցին քառակամար (քառաբսիդ), կենտրոնագմբեթ, խաչաձեւ հատակագծով, միախորան կառույց է։ Պատերին եղած հինգ արձանագրություններից եւ ոչ մեկում չկան վանքի հիմնարկեքից տեղեկություններ։ Գավթի արձանագրությունների մեջ եւս բացակայում է վերջինիս կառուցմանը վերաբերող վիմագիրը։ Ուստի ուսումնասիրողները, ելնելով եկեղեցու եւ գավթի կառուցման ճարտարապետական, շինարարական առանձնահատկություններից, իրավացիորեն եկեղեցին համարում են Թ.—Ժ. դարի, իսկ գավիթը՝ ԺԲ.—ԺԳ. դարի Սյունյաց ճարտարապետական դպրոցի կառույցներ[5]։

Եկեղեցու ամենավաղ վիմագիրը 1211 թվականի է։ Արձանագրությունը վկայում է, որ Հայրավանքի երկու առաջնորդները՝ Հովասափն ու Ներսեսը, աջակից ունենալով Գեղարքունիքի իշխան սպարապետ Բուբային[6], միաբանների ու գյուղացիների օգնությամբ նորոգել են եկեղեցին։ Բացի նորոգմանը նյութապես օժանդակելուց՝ սպարապետը, միաբանության ծախսերը հոգալու համար, Հայր Հովհաննու վանքին նվիրաբերել է այգիներ Ոսկեբակից, առուներ Քանաքեռից եւ երկու ջրաղաց Նորաշիկից[7]։

Տաճարի հարավային մուտքի վերնասեմի (բարավոր) վրա կա ուսումնասիրողների կողմից իրավամբ նույն ժամանակով թվագրվող մի արձանագրություն։ Այն վաստակաշատ գիտնական Սեդրակ Բարխուդարյանը «Դիվան»-ում հրատարակել է այսպես.

ԵՍ ՍԱՐԳՍՈՒԿ ԵՒ ԲԱՀՐ ՇԻՆԵՑԱՔ :Բ: ԽՈՐԱՆ
ԵՍ ՎԱՀՐԱՄ, ՍՏԵՓԱՆՈՍ, ՄԻՈՒՆԱ, ԽԱՉԱՏՈՒՐ/
ՄԽԻԹԱՐԻՉՔ ՏՎԱՔ ՅԱՒԱՆ ՉՊԱՏՈՎԻ ՏԵՂԻՆ ՅԱ/

---

[4] *Տե՛ս* Սիմեոն Ա. Երեւանցի, *նշ., աշխ., էջ 284։*

[5] *Տե՛ս* Ս. Մնացականյան, *Հայկական ճարտարապետության Սյունիքի դպրոցը, Երեւան, 1960, էջ 16.* Ս. Բարխուդարյան, *Դիվան հայ վիմագրության, Գեղարքունիք, պրակ* IV, *Երեւան 1973, էջ 67 (№261).* Ա. Մանուչարյան, *Քննություն 4—9-րդ դարի շինարարական վավերագրերի, Երեւան, 1977, էջ 113։*

[6] *Այս իշխանաց իշխանի անունն Աճառյանը հիշում է Բուպա ձեւով («Հայոց անձնանունների բառարան», հտ. Ա., Երեւան, 1942). այլ տարբերակներ տե՛ս* Գ. Գրիգորյան, *Պատրոն տերմինը միջնադարյան հայ աղբյուրներում, «Հայոց պատմության հարցեր», գիտական հոդվածների ժողովածու, 6, Երեւան, 2005, էջ 157։*

[7] *Տե՛ս* Ս. Բարխուդարյան, *նշ. աշխ. էջ 69 (№261)։*

ԻԱՆԱՓՈՍ Ի ՎԱՆՔՍ ԵԻ ԱՌԱՋՆՈՐԴ ՍՈՐԱ ՅՈՎԱՍԱՓՆ/
ԵԻ ՆԵՐՍԷՍ ՏՎԻՆ ՄԵՋ Ի ՄԱՐԴՆ/ Ա ԺԱՄ Ի ՍԲ ԽԱՋԻՆ ՈՐ ՁԵԳԻՆ Ի ՎԱ-ՆԻՅՍ ՀԱՆԷ ՅԱՅ ՆՁՈՎԵՍՅԻ[8]:

Այս վավերագրում միախորան եկեղեցում երկու խորանների շինության մասին տեղեկությունը գիտնականների շրջանում առաջացրել է տարակարծություններ եւ տարբեր ենթադրությունների պատճառ դարձել։

«Քանի որ եկեղեցին մի խորան ունի, եւ այն էլ այդ նորոգումների ժամանակ է կցվել եկեղեցուն, ուրեմն երկրորդ խորանը վերաբերում է գավթին, իսկ գավթի խորանները կցորդ չեն, այլ հիմնական շինության մաս»,— գրում է Ս. Բարխուդարյանը[9]։ Արձանագրության մեջ հիշատակվող «երկու խորանները» գավթի արեւելյան կողմի երկու սենյակներն է համարում Ալեքսանդր Մանուչարյանը[10]։

Կարծում ենք, որ գավիթը, առավել եւս գավթին կից սենյակները խորան չեն. Սարգիսուկի եւ Բահր վարպետների կառուցած երկու խորաններից մեկը Հայր Հովհաննու վանքի եկեղեցու խորանն է, իսկ մյուսը՝ մեկ այլ եկեղեցու։ Այս ենթադրության համար կարեւոր կռվան է, եւ գուցե ապացույց, այդ նույն առաջնորդների մեկ այլ արձանագրությունը («Դիվան», թիվ 266)։ Այն գավթի հարավային պատին է։ Ջնայած այսօր մեզ հասած վիմագրի բավական եղծվածությանը՝ ընթեռնելի հատվածում արձանագրվում է մի շատ կարեւոր փաստ, ըստ որի՝ Հովասափ եւ Ներսես միաբանները «շինել» են՝ կառուցել կամ նորոգել են մի եկեղեցի եւ գավիթ.

ԿԱՄԱԻՆ ԱՅ ՄԵՔ ԵՂԲԱՐՔՍ ՆԵՐՍԷՍ ԵԻ ՅՈՎԱՍԱՓ/
ՇԻՆԵՑԱՔ ՁԵԿԵ[ՂԵՑԻՍ ԵԻ] ՁԳԱԻԻԹՍ... ԱՅԳԻ /ՁԱՂԱՅԱՆԻ ԵԻ ...[ՄԻԱ-ԲԱՆ]ՔՍ ՍԱՀՄԱՆԵՑԻՆ /ՊԱՏԱՐԱԳ Ի ՏԱԻՆԻ ԾԱՌԶԱՐԴԱՐԻՆ :Բ: ՆԵՐՍԻՍԻ/ ԵԻ :Բ: ՅՈՎԱՍԱՓԻՆ: ՈՎ ԽԱՓԱՆԷ ԴԱՏԻ ՅԱՅ[11]:

---

[8] *Անդ (թիվ 269)։ Այս արձանագրությունը կրճատումներով հրատարակել են Ս. Ջալալյանցը (Ճանապարհորդութիւն ի Մեծն Հայաստան, մասն Բ., Տփխիս, 1858, էջ 136), Հ. Ղեւոնդ Ալիշանը, (նշ., աշխ., էջ 41), Մ. արք. Սմբատյանցը (նշ. աշխ., էջ 435) եւ Ե. Լալայանը («Ազգագրական Հանդէս», գք. XXIII, էջ 140)։*

[9] Ս. ԲԱՐԽՈՒԴԱՐՅԱՆ, *նշ. աշխ., էջ 68։*

[10] *Տե՛ս* Ա. ՄԱՆՈՒՉԱՐՅԱՆ, *նշ. աշխ., էջ 113։*

[11] Ս. ԲԱՐԽՈՒԴԱՐՅԱՆ, *նշ. աշխ., էջ 71։*

Այս վավերագիրը եւս անթվական է, սակայն հրատարակիչը ենթադրում է, որ 1211 թվականից մի քանի տարի հետո պետք է գրված լինի եւ վերաբերում է եկեղեցու եւ գավթի նորոգմանը[12]։

Համեմատելով եկեղեցու հարավային մուտքի վերնասեմի արձանագրությունը (ավելի վատ պահպանված) եւ նույն արձանագրության՝ «Դիվան»-ում հրատարակված գծագրային վերծանությունը, ինչպես նաեւ արձանագրության լուսանկարը՝ Սարգսուկի վիմագիրը կարդում ենք այսպես.

ԵՍ ՍԱՐԳՍՈՒԿ ԵՒ ԲԱՀՐ ՇԻՆԵՑԱՔ :Բ: ԽՈՐԱՆ
ԵՍ ՎԱՀՐԱՄ ՍՏԵՓԱՆՈՍ ՄԻՈՒՆԱ[13] ԽԱՉԱՏՈՒՐ/
ՄԽԻԹԱՐԻՉՔ ՏՎԱՔ ՅԱՒԱՆ ՉՊԱՏՈՎ Ի ՏԵՂԻՆ/
ՅԱՒԱՆԱՓՈՍԻ ՎԱՆՔՍ ԵՒ ԱՌԱՋՆՈՐԴ ՍՈՐԱ /
ՅՈՎԱՍԱՓՆ ԵՒ ՆԵՐՍԷՍ ՏՎԻՆ ՄԵՉ Ի ՄԱՐԴՆ
:Ա: ԺԱՄ Ի ՍԲ ԽԱՉԻՆ ՈՐ ՉԵԳԻՆ Ի ՎԱՆԻՑՍ ՀԱՆԷ ՅԱՅ ՆՉՈՎԵՍՑ[Ի]:

Այսինքն՝ Հայրավանքի Հովասափ եւ Ներսես առաջնորդները ոչ միայն իրենց եկեղեցում են նորոգումներ կատարել, այլեւ օժանդակել են հարեւանությամբ գտնվող մեկ այլ՝ Հավանափոսի վանքում խորան կառուցելուն կամ նորոգելուն։ Դրա համար միաբանության առաջնորդները Սարգսուկ եւ Բահր վարպետներին «Ի.»՝ քսան աշխատող են տրամադրել։

Գեղարքունիքում այդ եւ ավելի վաղ շրջանի հայ ճարտարապետության սյունյաց դպրոցի նշանավոր եկեղեցիներ, վանքեր, բազմաթիվ հոգեւոր հաստատություններ կառուցող, նորոգող՝ հիշելու արժանի շինարար շատ վարպետներ են եղել։ Սակայն միայն Սարգիսուկի եւ Բահրի աշխատանքն է ուշադրության արժանացել։ Մյուս վարպետները հավանաբար ոչ պակաս մնայուն գործեր են թողել, որոնք առավել արժանի են մեծարանքի, սակայն, դժբախտաբար, նրանց անունները մնացել են անհայտության մեջ։

Հայրավանքի եւ Հավանափոսի վանքի նորոգման ծախսերը հոգացել են Վահրամ, Ստեփանոս, Միունա(՞), Խաչատուր եւ Մխիթա-

---

[12] *Տե՛ս անդ, էջ 71։*

[13] *Մենք փորձեցինք կարդալ գրեթե անհասկանալի այս փակագիրը։ Այս փակագրի «Մնուա» ընթերցումը կասկածելի է համարել նաեւ Ս. Բարխուդարյանը (*Ս. ԲԱՐԽՈՒԴԱՐՅԱՆ, *նշ. աշխ., էջ 70, ծանուցում)։*

րիչ այրերը, որոնք Հավանափոսի միաբանների գոյության եւ գործունեության պայմանները բարելավելու համար նրանց նվիրել են մի պարսպապատ ավան։ Ահա այս օժանդակությանն է թերեւս նվիրված վերոբերյալ արձանագրությունը։

Բացի այս վիմագրից՝ Հայրավանքի եկեղեցու վրա կան նաեւ Համազասպի 1213 թվականի, նույն՝ ԺԳ. դարով թվագրվող Ջահաբի, Մուծկանց Գրիգորի, Աբելի, Առաքելի, ինչպես նաեւ ԺԴ. դարի Օրբելյան Ինանիկ (Իվանե) եւ Բեշքեն իշխանների նվիրատվական արձանագրությունները[14]։ Այսօր հրատարակված է վանքի, Հայրավանք գյուղի մատուռի եւ գերեզմանների տապանաքարերի եւ խաչքարերի 58 արձանագրություն՝ նախկինում հրատարակված հինգի փոխարեն[15]։

Մարդաղավնյաց Սուրբ Նշան անունը Հայրավանքն ստացել է, որովհետեւ այստեղ պահվել է Քրիստոսի խաչափայտի սուրբ մասունքը։ Վանքի այս անվանումը միաժամանակ ուղիղ աղերսներ ունի մի ժողովրդական ավանդության հետ, որը կապվում է Լենկ Թեմուրի՝ Հայաստան կատարած արյունալի արշավանքների հետ[16]։

Մենք կանդրադառնանք ավանդապատման՝ Մեսրոպ արքեպիսկոպոս Սմբատյանցի շարադրանքին, որը տեղ է գտել Գեղարքունիք գավառին նվիրված իր աշխատությունում։

Գրավելով Հայաստանի մեծ մասը՝ մոնղոլական զորքերը հասնում են Գեղարքունիք։ Այստեղ Լենկ Թեմուրը հանդիպում է մի արտակարգ դեպքի։ Նրան տեղյակ են պահում, որ Այրիվանքի առաջնորդը չափազանց հավատավոր եւ աղոթասեր վանական է։ Ականատեսները պատմում են նաեւ, որ Աստծու զորությամբ՝ առաջնորդը, վանքում պահվող Քրիստոսի խաչափայտի մասունքով ագուցված խաչը կապելով մեջքին, վազելով անցնում է Սեւանա լճի վրայով, հասնում Սեւանա կղզի։ Հրաշքը պատմվում էր ամենուր։ Վանահայր Հովհաննեսը տեսնելով, որ թշնամու զորքը մոտենում է վանքին եւ զգալով մոտալուտ վտանգը, ծնկաչոք

---

[14] Ս. ԲԱՐԽՈՒԴԱՐՅԱՆ, *նշ. աշխ.*, *էջ 70–71։*

[15] *Անդ, էջ 68։*

[16] *Առաջին անգամ ավանդապատումին անդրադարձել են Ղազար Ջահկեցին իր «Դրախտ ցանկալի»-ում (տե՛ս* ՂԱԶԱՐ Ա. ՋԱՀԿԵՑԻ, *Գիրք աստուածաբանական, որ կոչի Դրախտ ցանկալի, Կ. Պոլիս, 1795, էջ 672–673), ապա Միքայել Չամչյանը՝ «Պատմութիւն Հայոց»-ում (տե՛ս* ՀԱՅՐ ՄԻՔԱՅԷԼ ՎՐԴ. ՉԱՄՉԵԱՆՑ, *Պատմութիւն Հայոց, հտ. Գ. Վենէտիկ 1786, էջ 888–882), որոնք ավանդապատումի վայրը համարում են Սյունիքը, իսկ ըստ Սարգիս եպիսկոպոս Ջալալյանի՝ ավանդապատման վայրը Սեւանա լճի ավազանում է (տե՛ս* ՍԱՐԳԻՍ ԵՊՍ. ՋԱԼԱԼԵԱՆ, *նշ. աշխ., էջ 13)։*

աղոթքով դիմում է Ամենակարողին՝ աղերսելով փրկել միաբաններին եւ շրջապատի գյուղերի հավատավորներին։ Բռնակալը ցանկանում է տեսնել այդ հավատավորին եւ կատարել նրա բոլոր ցանկությունները։ Մեծ խոստումներ է տրվում վանահորը՝ գանձեր եւ փառք։ Սակայն ճգնավոր սուրբ այրը մերժում է դրանք՝ փոխարենը խնդրելով կյանք շնորհել իր հոտին։ Լենկ Թեմուրը համաձայնում է՝ պայմանով, որ վարդապետն իր առողջության եւ երկարակեցության համար աղոթի։ Դրա փոխարեն բռնակալը խոստանում է այնքան հավատավորի կյանք շնորհել, որքան եկեղեցում կտեղավորվի։ Հովհաննես վանահայրն սկսում է աղոթքը, որն ուղեկցվում է եկեղեցի մարդկանց հոսքով։ Բավական ժամանակ է անցում, եւ Լենկ Թեմուրը նկատում է, որ մարդկանց շարժումը դեպ եկեղեցի չի դադարում։ Նրա ուղարկած զինվորները, մտնելով եկեղեցի, տեսնում են, ո՛վ զարմանք, հավատացյալներն աղավնու թեւեր առած թռչում են Սեւանավանքի ուղղությամբ եւ փրկվում օրահաս վտանգից[17]։

Քրիստոսի խաչափայտի մասունքով այս խաչը դեռ երկար ժամանակ շարունակում էր մնալ վանքում։ Տեղի միաբանության փակումից հետո այն տեղափոխվել է Սեւանավանք եւ մինչեւ ԺԹ. դարի վերջը պահվում էր Սուրբ Առաքելոց եկեղեցում[18]։

Հայրավանքում նպաստավոր պայմաններ կային վանական միաբանության մենաստանային հոգեւոր կյանքի եւ գործունեության համար։ Ամենայն հավանականությամբ՝ այստեղ եղել է վարդապետարան, որի սաներն ընդօրինակել են ձեռագիր-դասագրքեր, որոնք պահվել են գրապահոց-մատենադարանում։

Հայրավանքից մեզ հասած առաջին ձեռագիրը 1530 թ. մի Ավետարան է, որն ընդօրինակվել է Հայաստանի համար դժնդակ ժամանակներում՝ «...ի հայրապետութեան տէր Գրիգորի... յերկիրս Գեղամայ, ի Սուրբ ուխտս որ կոչի Հայր Յոհան, ի դառն եւ ի նեղ ժամանակի [յորում] եկն յերկիրս մեր տաճիկ մի հարկ խնդրէր ոչ համարաւք, այլ թաւարուք,

---

[17] Մեսրոպ արք. Սմբատեանց, նշ. աշխ., էջ 443. Մեսրոպ արք. Սմբատյանցն այս նույն դեպքերին տալիս է զուտ հոգեւոր արժեւորում իր մեկ այլ՝ «Նկարագիր Սուրբ Կարապետի վանից Երնջակայ եւ շրջակայից նորա» աշխատանքում (Տփխիս, 1904, էջ 18)։ Ավանդապատումն իր գեղարվեստական արտացոլումն է գտել Հովհ. Թումանյանի «Աղավնու վանքը» բալլադում. (տե՛ս Հովհ. Թումանյան, Երկերի ժողովածու, հտ. Ա., Երեւան, 1969, էջ 297–299)։ Այս ավանդապատման ԺԸ.–Ի. դարերի տարբեր գրառումների տարբերակման, Թումանյանական եւ արդի գրականագիտական մոտեցման քննության մանրամասները տե՛ս Վ. Դեւիրիկյան, Թումանյանը եւ հայոց հոգեւոր ավանդույթը, Երեւան, 2010, էջ 36–52։

[18] Մեսրոպ արք. Սմբատեանց, նշ. աշխ., էջ 136–137։

որ է հարկ բեռին»։ Դժբախտաբար մեզ է հասել միայն ձեռագրի այս հիշատակարանի համառոտ ընդօրինակությունը[19]։

Հաջորդ ձեռագիրը, որը հասել է մեզ եւ պահվում է Մաշտոցի անվան Մատենադարանում, էջմիածնի տեսուչ Սիմեոն վարդապետի պատվերով ընդօրինակված մատյան է։ Այն բովանդակային առումով հետաքրքիր ժողովածու է, որի մեջ մտնող բոլոր նյութ-միավորներն ընդօրինակվել են տարբեր գրչակենտրոններում։ Այդ ձեռագրի ընդօրինակումն ավարտվել է 1648 թ.։ Նշենք, որ ձեռագրի ընդօրինակմանը մասնակցել է նաեւ պատվիրատուն։

Ձեռագրի նյութերից մեկի՝ «Մեկնութիւն վեցօրէից արարչութեանն» ընդօրինակությունը կատարվել է «...յաշխարհս Պարսից մերձ ի յԱսպահան արքայանիստ քաղաքին, ի գեղաքաղաքին Նոր Ջուղայոյ, ի մենաստանի Ամենափրկիչ վանացն...», իսկ մյուսի՝ «Գիրք հոգեացն եւ հրեշտակացն»-ի ընդօրինակումը՝ «...ի... Աթոռոյս էջմիածնիս, ձեռամբ Թաթէոս դպրի» Սիմեոն վարդապետի աշակերտի։

Երրորդը մեզ հետաքրքրող ընդօրինակությունն է՝ Պետրոս Արագոնացու «Գիրք մոլութեան» եւ «Գիրք առաքինութեան» գործի, որ «Գրեցաւ յերկիրս Գեղամայ, ի գաւառիս Մազազայ, ընդ հովանեաւ վանացս, որ կոչի Հայր Յոհանավանք, ձեռամբ Յովհանիսի դպրի»[20]։

Ժողովածուի վերջում եղած հիշատակարանը հաղորդում է նաեւ ձեռագրի ստեղծման այլ մանրամասներ։ Պատվիրատու Սիմեոն վարդապետը մեծ ցանկություն է ունեցել «Մոլութիւնքի» բնագիրն ունենալու։ Ձեռք բերելով գործի գաղափար օրինակը՝ նա սկսել է ընդօրինակել, սակայն ստիպված է եղել դադարեցնել ընդօրինակությունը, երբ նկատել է, որ գաղափար օրինակը հեռու է կատարյալ լինելուց. թարգմանությունն ունեցել է անճշտություններ եւ սխալներ։ «Արդ, ես՝ Սիմէոնս, ցանկայի բազում ժամանակաց Գրոցս Մոլութեան եւ կամէի մատամբ իմով գրել, որպէսզի ուղղեցից ըստ քերթողութեան արհեստին, քանզի թարգմանիչք սորա ոչ գիտելով զարուեստ քերականութեանն, ոչ կարացին ուղղակի թարգմանել, որպէս յայտ է հըմտացելոցդ, որք ընթեռնուք զսա»։ Իմանալով, որ գործի կատարյալ օրինակներից մեկը պահվում է Հայր Հովհաննու վանքում՝ հանձնարարել է Հովհաննես դպրին ընդօ-

---

[19] ՀԱՅՐ ՂԵՒՈՆԴ ԱԼԻՇԱՆ, *նշ. աշխ.*, էջ 141։ Ձեռագիրը պահվել է Փոքր Հայքի Տիվրիկ քաղաքում։

[20] ՄՄ Հմր 4064, էջ 421ա։

րինակել այն։ Որքան էլ ցանկանար իր ձեռքով խմբագրել եւ ավարտին հասցնել գործը, Սիմեոն վարդապետն զբաղվածության եւ առողջական խնդիրների պատճառով չի կարողացել կատարել իր ցանկությունը։ Այնուամենայնիվ, վարդապետը հույսը չի կորցրել, որ կսրբագրի եւ ավարտուն կդարձնի գործը. «...եթէ կարացիս, սրբագրեցիս, եւ թէ ոչ՝ անմեղադիր լերուք»[21]։ Կիսակատար մասերն իր ցուցումով լրացրել է Թաթեոս գրիչն էջմիածնում։

Մեր ուսումնասիրությունը ցույց տվեց, որ ժողովածուի «Գիրք մոլութեան» եւ «Գիրք առաքինութեան» գործի սկիզբն օրինակել է Հովհաննես դպիրը՝ երկսյուն գրությամբ։ Նրա գիրը համաչափ է, գեղեցիկ։ Դրան հաջորդում է Թաթեոս գրչի միասյուն բոլորգիրը։ 125ա էջից նորից Հովհաննես դպրի համաչափ գիրն է, որով եւ ավարտվում է ձեռագիրը։ Հովհաննես դպիրն է զարդագրել նաեւ նկարազարդ էջերը։ Ամբողջ ձեռագիրը միջին չափերի է, գրված է թղթի վրա՝ միասյուն եւ երկսյուն գրությամբ։ Գիրը բոլորգիրն է։ Ձեռագրի կազմը եւս գրչության ժամանակի է։

Հայրավանքում է, հավանաբար, 1652 թ. ավարտին հասել Մովսես եւ Հակոբ երեցների Սյունյաց Ապահեն գյուղում սկսած «Շարակնոց»-ը։ Ձեռագիրն այժմ պահվում է Մատենադարանում (Հ՝ թ 1626)։ Այն փոքր չափերի է, գրված է միասյուն բոլորգրով, նկարազարդ է, ունի «Աւետումն Յովակիմայ եւ Աննայի» պարականոն, ինչպես նաեւ տերունական՝ «Յարութեան» նկարները, կիսախորաններ, գլխազարդեր։

«Շարակնոց»-ն սկսել է Մովսես երեցը (էջ 1ա—169բ), շարունակել եւ նրան օգնել է Հակոբ գրիչը. «Ո՛վ դասք սուրբ երամից, յորժամ ընթեռնուք սուրբ գիրքս, զանարժան Յակոբ երէցս յիշեցէք, որ ի «Նորոգեալ կղզիք»էն մինչ Վարդավառի երկրորդ աւուր, Տէր յերկնից ի յետի տունն [գրեցի]» (էջ 169բ—250բ)։ Այնուհետեւ ընդօրինակությունը շարունակել է Մովսես երեցը եւ ավարտել «Շարակնոց»-ը (էջ 250բ—405 բ) Մարդաղավնյաց Սուրբ Նշան վանքում։

Ավարտելով ձեռագիրը՝ Մովսես երեցը շարադրում է գլխավոր հիշատակարանը, որի վերջին մասը չի պահպանվել։ Չի պահպանվել նաեւ «Շարակնոց»-ի գրչության վայրի հիշատակությունը։ Ընդհանրապես հիշատակարաններում գրիչներն իրենց անձի մասին շատ քիչ տեղեկություններ են հաղորդում։ Սակայն Մովսես գրչի ձեռագրի բավական եր-

---

[21] *ՄՄ Հ՝ թ 4064, էջ 421ա։*

կար գլխավոր հիշատակարանում գրիչը գրում է. «...եմք բնական ի յերկրէն Ղափանայ, ի միւս յերկրէն Ծագաձորոյ, ի գեղջէն Գորիսոյ»[22]։

Մի ավազակային հարձակման պատճառով Մովսես երեցն ստիպված էր թողնել հայրենի եզերքն ու հաստատվել Սյունյաց մի այլ գավառում՝ Ծարում՝ Ապահեն գյուղում։ Այստեղ էջմիածնի Փիլիպպոս եւ Աղվանից կաթողիկոսների հայրապետությունների տարում Դաղիվանքի եւ Մարդաղվնյաց Սուրբ Նշանի առաջնորդ Ստեփանոսի ձեռքով ձեռնադրվում է քահանա։ Գրիչն առանձնակի սիրով է խոսում Ստեփանոս արքեպիսկոպոսի մասին, որի կողքին նա հավանաբար շարունակել է գրչական աշխատանքը՝ կատարել ընդօրինակություններ։ Բավական փորձառու է Մովսես գրիչը ձեռագրերի ընդօրինակման՝ գրչության արվեստի եւ մանրանկարչության մեջ, եւ ինչպես վկայում է անավարտ հիշատակարանը, նա նաեւ «Շարակնոց»-ի կազմողն էր. «Ի թուականութեանս Հայոց ՌՃԱ. (1652) գրեցաւ, ծաղկեցաւ եւ կազմեցաւ Եղանակաւոր տառս ձեռամբ///»[23]։

Ժամանակին այս ձեռագրին իր՝ Գեղարքունիքին նվիրված աշխատանքում անդրադարձել է Մեսրոպ արք. Սմբատյանցը։ Խոսելով Հայրավանքի ձեռագրական ժառանգության մասին՝ նա նշում է. «...Գրվել է այստեղ (Հայրավանքում.— Ա. Ղ.) եւ Շարականն յամին 1652 (ՌՃԱ.), ի Մովսէս երիցէ, ի հայրապետութեան Տեառն Փիլիպպոսի»։

Սակայն արքեպիսկոպոսի երկրորդ այցելության ժամանակ վանքի մատենադարանում ձեռագիրը չի եղել, եւ Մեսրոպ արք. Սմբատյանցը ցավով փաստում է. «Այսպէս եւ շատ գրեանք, որք գտնւում են զանազան տեղեր կամ վատ մարդկանց ձեռքով կորել, անյայտացել են»[24]։ Հնարավոր է, որ այդ ընթացքում տուժած լինի նաեւ «Շարակնոց»-ի գլխավոր հիշատակարանը։ Ամենայն հավանականությամբ՝ Հայրավանքի ձեռագրերի ցուցակը կազմելիս Մեսրոպ արք. Սմբատյանցը «Շարակնոց»-ի գլխավոր հիշատակարանը տեսել է ոչ թե թերի, այլ ամբողջական տեսքով եւ այդ իսկ պատճառով համարել է, որ այս ձեռագիրը գրվել է Մարդաղվնյաց Սուրբ Նշան վանքում։

Այսինքն՝ ըստ Մ. Սմբատյանցի կազմած ձեռագրացուցակի՝ այդ ձեռագիրը գրվել եւ ավարտվել է Մարդաղվնյաց Սուրբ Նշանում եւ ոչ թե

---

[22] *ՄՄ Հմր 1626, էջ 405բ։*

[23] *ՄՄ Հմր 1626, էջ 406բ։*

[24] Մեսրոպ արք. Սմբատեանց, *նշ. աշխ., էջ 444։*

Սյունիքի Ապահեն գյուղում, ինչպես կարծում են Մաշտոցի անվան Մատենադարանի «Մայր ցուցակ ձեռագրաց»-ը կազմողները[25]։

Մարդաղավնյաց Սուրբ Նշանը Հայրավանքն է, քանի որ աղբյուրներում այդ անունով մեկ այլ վանք չի հիշվում ո՛չ Սյունիքում, ո՛չ Արցախում, իսկ Հայրավանքն այս անունով հիշվում է մինչեւ ԺԹ. դարը։

РЕЗЮМЕ

Айраванк известен также как монастырь отца Иоанна, монастырь Айриванк, Мардагавнеатс Сурб Ншан. Это один из самых известных монастырей Гегаркуникской области. В источниках нет сведений о строительстве монастырского комплекса, о культурной деятельности монахов. Впервые этот монастырь упоминается в колофонах 1530 года. Сейчас от монастырского комплекса сохранились только церковь и притвор, архитектура и литографии которого изучены. В статье мы даем новое прочтение литографии. Также изучены названия монастыря, особенно имя Мардагавняц Сурб Ншан, о котором есть свидетельства в колофонах, а также известна одна легенда.

SUMMARY

Hayravank is also known as Monastery of Father Hovhannes, Ayrivank Monastery, Mardagavneats St. Neshan (Holy Cross) Monastery. This is one of the most famous monasteries of Gegharkunik. The sources do not contain information about the construction of the monastic complex; there is no information about the cultural activities of monks, either. This monastery was first mentioned in colophons of 1530. Now only the church and the narthex have survived from the monastic complex, the architecture and lithographs of which have been studied. In this article, we present a new lithographic decrypt. We have also studied the names of the monastery, especially the name Mardagavneats St. Neshan, about which there is a legend and evidence in the colophons.

---

[25] *«Մայր ցուցակ հայերէն ձեռագրաց Մաշտոցի անվան Մատենադարանի», հտ. Ե., Երեւան, 2009, կազմեց՝ Օ. Եգանյան, էջ 681։*